

9(47.925)(084) 29079.

Г-23 / Выпеченные

сладкие печенье

выпеченные

Հ Կ. (Բ) Կ. Կ. Կ Կ Գ Ի Ս Թ Ա Ս Մ Ո Ւ Թ Յ Ա Ն Ի Ն Ս Տ Ի Տ Ո Ւ Տ՝

Կ Ա Յ Ի Ս Յ Ա Ն
Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը





Մ Ա Յ Ի Ս Յ Ա Ն
Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ը

Ա Յ Լ Բ Ո Մ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ Կ. ՂԱԶԱՐՅԱՆ Ի

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԳՈՒԹՅՈՒՆ օ ԳԵՂՀՐԱՏԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ ★ 1 9 3 2

THE
LIBRARY
OF THE
MUSEUM OF
ART AND HISTORY
OF THE
CITY OF
NEW YORK

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը (1920 թ. նոյեմբերի 29-ը), Անդրկովկասն անջատված եր հեղափոխական Ռուսաստանից, բաղկացած չերեք «անկախ» պետութիւններից՝ Վրաստան, Ադրբեջան, Հայաստան և ընդունում եր համաշխարհային պատերազմում հաղթանակ տարած իմպերիալիստական պետութիւնների խմբավորման՝ Անտանտայի (Անգլիայի, Ֆրանսիայի, ինչպես և Հ. Ա. Մ. Ն.) քաղաքականութիւնը: Սակայն քանի ղեռ Գերմանիան և Թյուրքիան ուժեղ ելին և հաջողութեամբ կռվում էին Անգլո-ֆրանսիական խմբավորման դեմ, Անդրկովկասի «անկախ» պետութիւնները նրանց հովանավորութիւնն էլին վայելում, բայց չերբ այս խմբավորումը պարտվեց, նրանք ընդունեցին Անտանտայի մանդատը՝ Անգլիայի, Ֆրանսիայի, ինչպես և Ամերիկայի: Իմպերիալիստական պետութիւններին հարելու պահանջը բղխում եր Անդրկովկասի նորածին բուրժուական պետութիւնների դասակարգային բնույթից, ինչպես և Անտանտայի կողմից առաջադրված պահանջից՝ նույն պետութիւնների նկատմամբ: 1918 թ. մայիսի 26-ին իրեն ցրված հայտարարեց Անդրկովկասյան Սեյմը, նույն թվին հայ հակահեղափոխական, հակապրոլետարական կուսակցութիւնները Հայաստանն անջատված հայտարարեցին Ռուսաստանից և «անկախ» պետականութեան հիմքը դրին: Վերոհիշյալ կուսակցութիւններից բաղկացած Թիֆլիսի Ազգային Խորհուրդը տեղափոխվեց Յերևան և կառավարութեան ֆունկցիան իր վրա վերցրեց: Այսպիսով նախկին Յերևանյան նահանգը՝ Հայաստանը կտրվեց հեղափոխական Ռուսաստանից, ինչպես և հարևան բուրժուա-կալվածատիրական պետութիւններից՝ Վրաստանից և Ադրբեջանից, ընդունեց Անտանտայի անմիջական ղեկավարութիւնը և կազմակերպվեց վորպես բուրժուական իշխանութիւն:

Իաշնակցութիւնը, միացած հայ մշուս կուսակցութիւններին, Հայաստանը դարձրեց այն վայրը, վորն Անդրկովկասյան բուրժուական մշուս հանրապետութիւնների հետ միասին, բայց և փոխադարձ թշնամական և հարձակողական ու վոչնչացման ուղիով՝ բազա պիտի ծառայեր իմպերիալիստական պետութիւնների համար Խորհրդային Ռուսաստանը խորտակելու գործում: Այդ հիմնական նպատակի հետ միասին Անտանտան ծրագրում եր կասեցնել հեղափոխական շարժումներն Անդրկովկասում, վոր մեծ արագութեամբ սկսում եր ընդգրկել ավելի լայն շրջաններ, անցնել բոլոր հարևան արևելյան յերկրները, և այսպիսով՝ Անտանտային չենթակա դադութեան յերկրների և բոլշևիկյան Ռուսաստանի միջև պատենշ կազմել հանձինս Անդրկովկասյան նորածին պետութիւնների: Անտանտան ծրագրում

եր՝ ելի նույն նպատակից յեկնելով՝ նույնպիսի պատենշ դարձնել միջին Ասիան և ընդհանրապես բոլոր ծայրամասերը, վորով, նրանց կարծիքով, հնարավորութունն է առաջ գալիս հեղափոխական Արևելքի և Արևմուտքի շարժումները ջլատել և ամրացնել կապիտալիստական պետութունների իշխանութունն այդ վայրերում: Սակայն ինչպես պատմութունը ցույց տրվեց, այդ պատենշները մեծ մասամբ խորտակվեցին և նրանց տեղ կազմակերպվեցին խորհրդային իշխանութուններ և Արևելյան յերկրներն ավելի ու ավելի ընդգրկվեցին կոմունիստական շարժումների մեջ:

Այդ նպատակներն ունենալով, սկզբում Անդլիան, հետագայում Ամերիկան մուտք են գործում Հայաստան, Խճանակում են կառավարիչներ, վորպես «Ազգերի Վեհաժողովի ներկայացուցիչ», ամեն կերպ աջակցում են Դաշնակցությանն իբ պետականութունն ամրացնելու, նվաճողական քաղաքականութունն իրագործելու համար մեծ բանակ կազմելու, միաժամանակ գժտեցնելով միմիանց դեմ Անդրկովկասյան նորածին պետութունները, թուլացնելու նրանց, Անդրկովկասը վերջնականապես աննեքսիայի յեմթարկելու համար, հատկապես Բազու և Բաթում կետերը գրավելու:

Ունենալով իմպերիալիստական պետութունների ֆինանսական, նյութական, զինվորական-ուղղմական աջակցութունը, Դաշնակցութունը Հայաստանում անխախտ պահեց ցարական վարչատնտեսական կյանքը, ուժեղացրեց բանվոր դասակարգի և գյուղացիության շահագործումը, վորն անասելի չափերի հասավ հատկապես 1920 թ. նախորեյին: Ցարիզմն ընկնելուց հետո Դաշնակցութունն իբ հովանավորության տակ վերցրեց հայ աղնվակալվածատիրական դասին, ձգտեց Հայաստան տեղափոխել անդրկովկասյան և արտասահմանյան հայ կապիտալները, իրեն խնամատար-մանդատյոր Ամերիկային հանձնել մի շարք կոնցեսիաներ և այսպիսով կազմակերպել «մեծ, անկախ, միացյալ, ծովից ծով Հայաստան» (Սև-Միջերկրական հետագայում նայե կասպից ծովերը):

Սակայն խորհրդային Ռուսաստանի հաջողութունները ներքին և արտաքին թշնամիների դեմ, բանվորական և գյուղացիական հարցերի լուծումը, սոցիալիստական հասարակարգի կառուցումը, Արևելքի և Արևմուտքի մի շարք յերկրների բռնկումը կոմունիստական շարժումներով և ապստամբութուններով, իրենց հերթին հեղափոխականացնում էյին ամբողջ Անդրկովկասի, մասնավորապես Հայաստանի բանվոր դասակարգը և գյուղացիութունը: Կազմակերպվում, բոլշևիկյան գաղափարներով դաստիարակվում էր Հայաստանի բանվոր դասակարգն ու աշխատավոր գյուղացիութունը: Իբ հերթին ուժեղանում էր կոմունիստական պրոպականդան ու ագիտացիան, կազմակերպվում էյին կուս. բջիջներ, պրոֆմիութուններին կից ֆրակցիաներ, կուս. կոմիտեներ, գաղտնի ղինված գվարդիաներ, ուժեր, հրատարակվում էր անլեգալ մամուլ, ուժեղանում էր կապը Անդրկովկասի բանվորական, բոլշևիկյան կենտրոնների և սոցիալիստական Ռուսաստանի հետ:

Մասսաների հեղափոխականացման ակտիվ արտահայտութունները Հա-

չաստանում ավելի ու ավելի ուժեղանում են մանավանդ 1920 թվին՝ ընդ-
գրկումը բջիջների՝ ֆրակցիաների մեջ, գործադուլներ, միտինգներ և այլն։
Այդ հեղափոխականացման հետևանքն է լինելու 1920 թ. բոլշևիկյան շար-
ժումներ, ի վերելքը՝ նույն թվին մայիսի 1-ի միջազգային տոնի կատարման
անախընթաց հաջողութունը։

Նույն թվին Ադրբեջանը խորհրդայնացավ, նրա անմիջական աջակ-
ցությունը Հայաստանի հեղափոխական մասսային միանդամայն ուսույն և
ավելի գործնական դարձավ։ Այս բոլորի հետևանքն լինեց 1920 թ. մայիս
ամսի մի շարք լեյուլթները, բոլշևիկյան ապստամբությունները, վորոնք
ընդգրկեցին Հայաստանի համարյա բոլոր կարևոր վայրերը՝ Լենինականը,
Իլիջան-Իջևանը, Նոր-Բայազետը, Ղարսը և այլն։

1920 թ. Մայիս ամսվա շարժումները Հայաստանում, ապստամբական
շարժումներ, բոլշևիկյան մասսայական հեղափոխական լեյուլթներ ելին, վո-
րոնք ընդգրկեցին Հայաստանի բանվորական և աշխատավոր գյուղա-
ցիական բոլոր կարևոր կենտրոնները։

Մայիսյան ապստամբությունները բանվորագյուղացիական ելին։
Շարժման մեջ հեղեմոն դեր էր խաղում բանվոր դասակարգը, ղեկավարու-
թյուն ունենալով Կոմունիստական (Բոլշևիկյան) Կուսակցությունը։

Այդ շարժումների նպատակն էր՝ խորտակել դաշնակցական-կապիտա-
լիստական ռեժիմը, դուրս քշել Հայաստանից իմպերիալիստական պետու-
թյունների ազնուներին, հաստատել խորհրդային սոցիալիստական կարգեր,
հարևան խորհրդային հանրապետությունների հետ միասին, ֆեդերատիվ հի-
մունքներով միանալ խորհրդային Ռուսաստանին։

Ապստամբ բանվորներն ու գյուղացիները գրավեցին Ալեքսանդրապոլը,
Ղարսը, Սարիղամիշը, Իլիջանը, Իջևանը Զանգեզուրի մի քանի վայրերը,
Նոր-Բայազետը։ Իշխանության գլուխն անցան հեղափոխական կոմիտեները,
վորոնք բաղկացած էին ճնշող մեծամասնությամբ կոմունիստական կու-
սակցության անդամներից, անմիջական ղեկավարությամբ տեղական կազ-
մակերպությունների՝ բջիջների և կոմիտեների, ը գհանուր ղեկավարու-
թյամբ Հ. Կ. (Բ.) Կ. Կենտկոմի (Արմենկոմի), վորի կենտրոնն էր Յերևանը։

Յերբ ծագեցին ապստամբությունները, դաշնակցական կառավարու-
թյունն անմիջական աջակցություն ստացավ Անգլիայից և Ամերիկայից,
դորքերի և կուսակցության անդամների մորիլիզացիա կատարեց, առան-
ձին ջոկատներ կազմակերպեց և խմբապետների ղեկավարությամբ ուղար-
կեց ապստամբների դեմ։ Գործող զորամասերից աչքի ընկավ Լենինա-
կանի դեմ ուղարկված Սեպուհի ջոկատը, վորի ուսերատիվ գործողություն-
ները կատարում էին ցարական չերկու գեներալներ՝ Գամազովը և Հախ-
վերզովը, ճնշման գործում նա իր դաժանությամբ առանձնապես աչքի ընկավ։

Առաջինն ընկավ Լենինականը, հետո, Ղարսը, Սարիղամիշը, ավելի ուշ
Իլիջան-Իջևանը և Նոր Բայազետը, իսկ ամենից վերջը Զանգեզուրը։ Մա-
յիսի վերջին և հունիսի սկզբին աբգեն ապստամբությունները ճնշվել էլին,

սակայն չեյին դադարել առանձին չեղուցիները և մասսաների հեղափոխական շարժումները:

Մալխոյան շարժումները ճնշվեցին, սակայն բոլշևիկյան պրոպագանդը, մասսաների կազմակերպումը, հեղափոխական շարժումները չդադարեցին: Իշխանութիւնը գրավելու միտքը չեք կորցրել իր սրութիւնը: Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիութիւնը գիտակցում ելին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան լավագույն շերտերը: Հեղափոխութիւնը չմեռավ, նա ավելի լայն, ծավալուն, մասսայականորեն տեղի պիտի ունենար:

Ունենալով այսպիսի խոր գիտակցութիւն և ընթանում դեպքերի զարգացման վերաբերյալ, Կոմունիստական Կուսակցութիւնն ուժեղացրեց ընդհատակյա աշխատանքները:

Ճիշտ է, մալխոյան ապստամբութիւնների ճնշումից հետո կուսակցական մարմինները մի պահ շփոթվեցին, սակայն շուտով կարողացան վերադասավորել, վերակառուցել իրենց աշխատանքները, նոր աշխատակիցներով հարստացնել իրենց կազմակերպութիւնները, վորի հետևանքը չեղավ կուսակցական կազմակերպութիւնների քանակական և վորակական աճումը, ավելի լայն մասսաների ընդգրկումը կուս. կազմակերպութիւնների և հեղափոխական շարժումների մեջ:

Դաշնակցական կառավարութիւնը ապստամբութիւնների ճնշման և իր «հաղթանակի» մասին անմիջապէս հայտնեց Յեւրոպական պետութիւնների ներկայացուցիչներին, Վրաստանի և Ադրբեյջանի կառավարութիւններին, նպատակ ունենալով, վորպէս հեղափոխութեան դեմ կովող պետութիւն հեղինակութիւն ձեռք բերել. Հայաստանի անկախութեան ճանաչման գործը շարունակել և չթուլացնել իր կապը կապիտալիստական պետութիւնների հետ, Խորհրդային Ռուսաստանի և խորհրդայնացող Ադրբեյջանի դեմ կովի գործը շարունակել:

Դաշնակցութիւնը դաժանութեամբ ճնշեց մալխոյան ապստամբութիւնները: Արմատախիլ անելու համար բոլշևիկյան շարժումները և ջլատելու համար բոլշևիկյան կազմակերպութիւնները, նա ձեռնարկեց մի դաժան դուրձ կազմակերպեց արտակարգ դատարաններ (տրիբունալներ), եկեղեկուցիաներ բազմաթիւ ձերբակալութիւններ, բանտարկութիւններ, գնդակահարութիւններ կատարեց. կոմունիստներ վորսալու համար պրովակատորների լայն ցանց հաստատեց:

Ամենադաժան գործը կատարեցին արտակարգ դատարանները: Դատարաններ կազմակերպվեցին համարյա բոլոր ապստամբական կենտրոններում: Դատարանների նպատակն էր ձերբակալված բոլշևիկներին, ապստամբութիւնների մասնակիցներին դատի հանձնել ու սահմանել պատիժ: Սակայն այդ ամբողջ դատավարութիւնը ձևականութիւն և ծաղր եր բանվորութեան և գյուղացիութեան հասցեյին: Ըստ ելուցիւն վոր մի դատական գործ տեղի չեք ունենում, ձերբակալվածները նախորոք գազանաբար ձեծվում ելին և

մեծ մասամբ գնդակահարվում: Չեբրակալվածները մեծ մասն առանց դատա-
կան գործողությունների չենթարկվեց պատժի:

Դաշնակցական կուսակցութունը մինչև հիմա չել պնդում է, վոր
ձեբրակալվածների և պատժի չենթարկվածների քանակը հատ ու կենտ է
յեղել: Սակայն հենց նույն դաշնակցական մամուլը, արխիվային տվյալները
առատ նյութ են տալիս ժխտելու համար վերոհիշյալ միտքը: Հնարավոր է
կազմել ձեբրակալվածների և սպանվածների ընդհանուր ցուցակը: Մենք
կարող ենք գոհերի թիվը մի քանի հարյուրի հասցնել: Չեբրակալվածների
մի մասը անասելի պատիժների չենթարկվելով մահացավ, մյուս մասը՝ աք-
սորվեց Հայաստանի սահմաններից դուրս, չեբրորդ մասը, վորը բաղկացած
էր ապստամբության ղեկավարներից՝ գաղտնի գնդակահարվեց, այսպես,
գնդակահարվեցին Մուսայելյանը, Սարուխանյանը, Ղարիբջանյանը, Ղու-
կասյանը, Մկրտումյանը և շատ շատերը:

Սպանությունները և գաղտնի գնդակահարումներն այն աստիճանի
մասսայական դարձան, հատկապես մայիսյան ապստամբությունների ճնշում-
ներից հետո, վոր մի շարք տեղական, ինչպես և յերկրային կազմակեր-
պություններ, Վրաստանի, Ադրբեջանի կոմունիստական կուսակցա-
կան և հասարակական կազմակերպությունները բողոքի բանաձևեր ըն-
դունեցին և կոչեր հրատարակեցին այդ մասին: Բողոքի նոտա ուղարկեց
Հայաստանի կառավարության նաև Ռուսաստանի Արտաքին գործոց կոմի-
սարիատը, ընկ. Չիչերինի ստորագրությամբ: Դաշնակցական կառավարու-
թյունը մի կողմից պատասխան է ուղարկում ընկ. Չիչերինին, վոր սպա-
նություններ տեղի չեն ունեցել, մյուս կողմից՝ նա շարունակում էր գաղտ-
նի սպանությունները: Այսպես, ափաշկարա կերպով, դաշնակցական կա-
ռավարությունը ժխտում և խարում է, վոր Մուսայելյանը և մյուսները
չեն գնդակահարվել, մինչդեռ այդ արդեն տեղի չեր ունեցած: Ադրբեջանի
Արտաքին գործոց կոմիսարը ընկ. Հուսեյնիովին՝ Հայաստանի դաշնակցական
կառավարությունը՝ նույնպիսի բացասական պատասխան է տալիս նրա
բողոքին և հարցումին, ինչպիսի պատասխան տվել էր ընկ. Չիչերինին:

Սակայն ձեբրակալությունները և գնդակահարումները չթուլացրին
հեղափոխական մասսաների ենտուղիազմը և կոմունիստական կուսակցու-
թյան կազմակերպությունների ընդհատակյա, հեղափոխական աշխատանք-
ները: Չոհերը շատ ելին, սակայն միաժամանակ մարտականորեն — կռում
կոփվում և կազմակերպում ելին տեղական կուս. կազմակերպությունները:
Չոհերի այդքան մեծ թիվը չթուլացրեց բոլշևիկյան կազմակերպությունները:
Ընկածների փոխարեն առաջ չեկան նորերը, վորոնք կարողացան էլ ավելի
ուժեղացնել բոլշևիկյան աշխատանքը և ճանապարհ հարթել Նոյեմբերյան
հեղափոխության համար:


Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page. The text is arranged in several paragraphs and is too light to transcribe accurately.




(ՄԱՅՏՈՒ) ԳՆԵՂԳԻՆԻՆԻ ԳՆՔԱՆ





ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ





ՂՈՒԿԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆ





15

A III
2695




ՅԵՆՈՔ ԱԿՐՏՈՒՄՅԱՆ






ՍԱՐԳԻՍ ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ




ԱՆԵՐՍԵՅԵՎ ՎԱՍԻԼԻՅ ՎԱՍԻԼՅԵՎԻՉ





ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ






36900 064300





ԲԱԴԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ






ԱՐՏԱՇԵՍ ՄԵԼԵՆՆԱՆ





ԱՐՇԱԼՈՒՅՍ ՓԱՆՅԱՆ






Մայիսի 1920 թ. մայիսի մեկին, այս շենքի ձախ կողմի կրապարակում, տեղի ունեցավ միտինգ, ուր կոմունիստների յեւույթներից հետո ընդունվեց վոլջոյնի բանաձեւով Խորհրդային Ազգրբեջանի կառավարության անունով:




Յերկաթուղային դեղին արհմիութեան վարչութեան շենքը (ձախից) Ալեքանդրապոլում, ուր 1920 թ. մայիսի մեկին ցուցարարների քափորը կոմունիստների ղեկավարութեամբ կայարանից քաղաքի շարժվելիս ընդհարվում է դաշնակցականների հետ, վորի ժամահակ բանվորները ծեծի յեն յենքարկում մի քանի դաշնակցների յեւ յլում նրանց ձեռքից գծի սպասարկութեան արհմիութեան դրոշակը:




Դաշնակցության ակումբի շենքը Ալեքսանդրապոլում 1919 — 20 թ. թ.: Այստեղ, 1920 թ. մայիսի մեկին ցուցարարները կոմունիստների դեկավարությամբ խիստ սուր ընդհարվում են դաշնակների հետ, ներս խուժում դաշնակցության ակումբը յեվ ավերում այն:




Ֆալքաուլու գյուղը (Լեռնականի շրջանում), ուր 1920 թ. մայիսին տեղի ունեցան ցույցեր յեվ ընդհարումներ, կռիվներ դաշնակցական բանդաների հետ:



Ռեվազուի կամուրջը (Ղազախ — Իջևիկանի շրջանում): Այստեղ 1920 թ. հունիսին տեղի ունեցան ուժեղ քաղաքացիական կռիվներ, վորոնցում ապստամբները հանդես բերին հերոսական պայքարի պայծառ եջեր: Այստեղ՝ հենց այս կամուրջի վրա ապստամբները կարողացան վոչնչացնել դաշնակցական բանդաներին, վորոնք կոչվում էին խմբապետ Մուրադի գլխավորությամբ:



Դաշնակցության թերեւանի բանտի այն կամերան, վորտեղ բանտարկված էին ը. ը. Ալլահվերդյանը, Մուսայեւյանը. Ղարիբջանյանը յեվ վորտեղից նրանց ոգոստոսի 14-ի գիշերը դուրս տարան զնդակահարելու:



Այստեղ՝ Յերեվանից Քանախեռ տանող խնուղու շրջակայքում, Քանախեռի տակ մի ամայի վայրում 1920 թ. ոգոստոսի 14-ի գիշերը դաշնակ. դահիճների ձեռքով գնդակահարվեցին հերոս ընկերներ Ստյոպա Ալլահվերդյանը, Սարգիս Մուսաեյանը յեղ Բագրատ Ղարիբջանյանը:



Այն վայրը՝ (Ալեքսանդրապոլ քաղաքից դուրս հրեական գերեզմանոցի շրջակայքում) ուր 1920 թ. հունիսի 4-ին (հին տումարով) դաշնակների ձեռքով գազանաբար գնդակահարվեցին ընկերներ Յեգոր Սեվյանը, Լեոնիդ Պրիբիլսկին յեղ Արշալույս Փանյանը: Գնդակահարութունը անմիջականորեն դեկավարում եր նախկին եսեր, արտակարգ դատարանի դատախազ-անդամ դաշնակցական դահիճ բժիշկ Բաղդասար Բաղդասարյանը:



Մալխի ապստամբության ժամանակսր Լեւինախանում
Գործ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ

Կ Ե Ն Ս Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ն Ե Ր

դաշնակցութեան դեմ, քողադերձ եւ անուժ դաշնակցութեան խակական դեմքը, նրա բուրժուական-ուեակցիոն, հակահեղափոխական ելուժյունը:

Այսպէս որինակ՝ նրա ճառը Ա. Զոհրաբջանի թաղման հանդեսին (20 թ. հունվարին), Յերեանի մայիսի 1-ի ցույցերին եւ այլն, վորպէս շճեցուցիչ հարվածներ ելին իջնում դաշնակցութեան դիւխին: Վերջինս շարունակ մտածում եր եւ աշխատում ընկ. Ստյոպալին «մեջտեղից վերացնելու:

Մայիսյան ապստամբութեան ժամանակ լինելով Աբմենկոմի կազմի մեջ՝ նա դեկավար աշխատանք եւ տանում: Ապստամբութեան ճնշումից հետո նա բռնվում եւ եւ դցվում բանտ, վորտեղից նա շարունակում եւ կապ պահպանել դրսի հետ: Սակայն շուտով դաշնակցական դահիճները նբան՝ Մուսայելյանի եւ Ղարիբջանյանի հետ միասին ոգոստոսի 14-ին, զիշերը, բանտից դուրս են բերում եւ տանում դեպի Քանաքեռ. ճանապարհին մի անմարդաբնակ վայրում դնդակահարում են, իսկ դիակներն՝ այրում:

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ ՀՈՎԶԱՆՆԵՍ

Նոր-Բայազեդի մայրիսյան ապստամբութեան ղեկավարը՝ Կոմունիստական կուսակցութեան անդամ: Ծնվել է 1882 թվին Նոր-Բայազեդում, չքավոր ընտանիքում: Նախնական կրթութիւնն ստացել է Ղազախի գավառի Դախկասման գյուղում, ապա Յերևանի ուսուցչական Սեմինարիայում և ավարտական քննութիւնն է բռնել Թիֆլիսի Ալեքսանդրյան ուսուցչական ինստիտուտում:

1901 թվից սկսած ուսուցչութեամբ է պարապել Նոր-Բայազեդում, գյուղերում և Հայաստանի այլ մասերում: Իր այդ պաշտոնին զուգընթաց կատարում էր հեղափոխական աշխատանք:

Նա չէր, վոր 1904-5 թ.թ. միջանի ընկերների հետ միասին (Բադիկ Բադիկյան) կազմակերպեց Նոր-Բայազեդում առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակը:

Իր հեղափոխական աշխատանքների համար Սարուխանյանը հեռացվում է Նոր-Բայազեդից և տեղափոխվում Իգդիր. այստեղից էլ նույն պատճառով 1911 թվին անցնում է Կաղզվան, ապա Ղարս: 1917 թվին Սարուխանյանը Ղարսում քաղաքային դպրոցի տեսուչ է նշանակվում, բայց իր խոչընդոտման գործունեութեան պատճառով հեռացվում է պաշտոնից և արքայազնի կողմից անցնում է Թիֆլիս և սկսում է այնտեղ տաքսիում Ղարսից: Այստեղից նա անցնում է Թիֆլիս և սկսում է աշխատել ծավալուն բողևակյան աշխատանքներ կատարել, միաժամանակ ղեկավարում տեսական պատրաստութեամբ:

Սակայն այստեղ՝ Թիֆլիսում, մի գաղտնի ժողովում նրան ձերբակալում են. մի քանի ամիս բանտում քննուց հետո նրան հաջողվում է ազատվել և նորից անցնել Ղարս: Ղարսից նա անցնում է Դարալագյազ, ապա գալիս է Յերևան և Արմենիոմի կողմից գործուղվում է Նոր-Բայազեդ, կուսակցական աշխատանքներ կատարելու համար: Այստեղ նրան դաշնակցական խրմբայետ Համադասալը բանտարկում է, վորից հետո նրան աքսորում են: 1920 թվի մայիսին նորից գործուղվում է Նոր-Բայազեդ, այս անգամ ապստամբութեանը կազմակերպելու համար, վորը և նրան հաջողվում է տեղական ընկերների ակտիվ մասնակցութեամբ, կազմակերպում է մասսայական շարժում: Ապստամբութեան ճնշումից հետո բանտարկվում է Փաշաքենդ գյուղում և անլուր բռնութիւնների ու բարբարոսական չարչարանքների յենթարկվելուց հետո, կիսակենդան գնդակահարվում է խմբապետ Արսեն Աղայի ձեռքով:

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՂՈՒԿՍՍ

Ղուկաս Հովաննեսի Ղուկասյանը ծնվել է 1899 թվի մայիսի 20-ին, Յերևանի գավառի Հրազդանի շրջանի Բալարա գյուղում, դերձակի ընտանիքում: 1906 թ. մտնում է Յերևանի «Կոնդ» թաղամասի միղասյան ծխական դպրոցը և ավարտում է 1909 թ.: Այնուհետև չերկու տարի հաճախում է Ալեքսանդրյան քաղաքային դպրոցը, վերջ և ավարտելուց հետո ընդունվում է Յերևանի թեմական դպրոցի առաջին դասարանը: Այստեղ սովորում է մինչև 1917 թ., դեռ չավարտած դուրս է գալիս 6-րդ դասարանից և իրեն նվիրում է հասարակական-քաղաքական աշխատանքներին: Հենց այդ տարիներին նա ծանոթանում է մարքսիստական աշխարհայացքին, աշխատում և աշակերտական Մարքսիստական Միության մեջ:

Ապրելով դաշնակցական դժոխքում, տեսնելով դաշնակցական պետականութան բոլոր սարսափներն ու արհավիրքները, Ղուկասյանը չնայած վաղ յերիտասարդական հասակին, իրեն ամբողջովին նվիրում է հեղափոխական աշխատանքներին:

Դաշնակցութունն այդ ժամանակ ուներ իր ազդանական չերիտասարդական կազմակերպությունը: Ղուկասը վճռական պայքարի յե դուրս գալիս նրա դեմ: Չանցած մի վորոշ ժամանակ, Հայաստանի Կոմ. Կուսակցությունը հիմնում է Կոմունիստական Յերիտասարդական Միություն՝ «Սպարտակը», վորի հիմնադիրներից ու փայլուն ղեկավարներից մեկն է լինում Ղուկասյանը, վորն անսպառ յեռանդով ու թափով, հեղափոխական մարտիկի վոգեվորությամբ, բոլշևիկյան պրոպագանդա յեր մղում, պայքարում եր դաշնակցական բուրժուա—կուլակային ղիկտատուրան տապալելու համար:

Լինելով խակական հեղափոխական մարտիկ ու տաղանդավոր՝ Ղուկասյանը 1918—20 թ. թ. առանց դեթ մի բոպե հուսահատվելու, ընկճվելու, տենդորեն վարում եր հեղափոխական աշխատանք՝ հրատարակելով կոչեր, թռուցիկներ, նրանց ցրելով կամ պատերին փակցնելով, Արմենկոմի գաղտնի, կոնսպիրացիոն հանձնարարությունները ճշտությամբ և հաջողությամբ կատարելով, գավառների անլեզալ կուս. բջիջների հետ գաղտնի կապ պահպանելով և այլն, և այլն:

Հեղափոխական այս աշխատանքներին զուգընթաց, նա լարված աշխատանք եր տանում իր տեսական պատրաստության համար, առանձնապես մեծ սիրով զբաղվում եր տիեզերագիտությամբ: 1918 թ. Ղուկասյանին դաշնակցական կառավարությունը զորակոչի յե յենթարկում և զցում զնդացրային վաշտ, ուր շուտով դառնում է նավորչիկ, միաժամանակ մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում է ռազմական գործը, քաջ գիտենալով, վոր այն շուտով պետք է գալու հեղափոխության հաղթանակի համար:

1919 թ. վերջին Ղուկասյանը գնում է Թիֆլիս և աշխատում է տեղի կուսակցական կազմակերպության մեջ: Սակայն նա այնտեղ չերկար չի մնում. շուտով վերադառնում է Հայաստան, ուր Արմենկոմը նրան ուղարկում է Ղարս՝ այնտեղի կոմ. կուս. կազմակերպության աշխատանքները ղեկավարելու համար: Աննախորհրատ լեռանդով և մոտակա հաղթահակի լի համոզումով՝ նա իրեն նվիրում է հանձնարարված գործին:

1920 թ. ապրիլի 20-ին գալիս է Յերևան՝ ղեկուցում տալու Արմենկոմին և նոր հանձնարարություններ ստանալու:

Շուտով նորից վերադառնում է Ղարս և անցնում ապստամբության հախապատրաստական անմիջական աշխատանքներին:

Բոլշևիկյան վճռականությունը հարվածում է բոլոր ոպորտունիստներին, պնդելով և անցկացնելով ապստամբության անցնելու տեսակետը: Ընտրվելով Ղարսի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ, անսպառ լեռանդով ու վողեվորությունը աջնում է ապստամբության գլուխ:

Զնայած իր չերիտասարդական հասակին՝ ընդամենը 21 տարեկան՝ Ղուկասյանը փայլուն կերպով ղեկավարում է ապստամբությունը. խրախուսիչ ու համոզեցուցիչ ճառերով վողեվորում է ապստամբ բանվորներին ու ղինվորներին, անողոք թափով խարազանում է անվճռականներին, վախկոտներին և թուլերին:

Մայիսի 10-ին իշխանությունն անցնում է կոմունիստների ձեռքը:

Ապստամբության պարտությունից հետո մոտ 28—29 հոգու գլուխն անցած, Ղուկասը չիտ է քաշվում Ղարսից, ցանկանալով գնալ Ալեքսանդրապոլ՝ միանալու այնտեղի ապստամբներին: Հոգնած ու քաղցած ապստամբները մեծ դժվարությամբ ընկնում են ճամբա:

Մազրա գյուղի մոտ, նույն գյուղի խմբապետ Ղոչիբաշի տերտերի ձիավոր խումբը հարձակվում է ապստամբների վրա:

Սակայն հեղափոխական մարտիկ Ղուկասյանը կարողանում է հակահարված տալ տերտերի խմբին ու նրանց փախուստի մատներ:

Մայիսի 14-ի առավոտը, ժամը 10-ին, ապստամբները հասնում են Արգիշո գյուղի ձորը և այնտեղ ջրաղացներում փորձում են քիչ հանդստանալ: Սակայն ապստամբները պաշարվում են դաշնակցական խմբերով: Ղուկասյանն առանց ընկճվելու անցնում է ապստամբների գլուխ ու սկսում է դիմադրել իրենցից անհամեմատ շատ դաշնակ ուժերին:

Սկսվում է տաք կռիվ, վոր տեվու է յերկու ժամ խլելով յերկու կողմից էլ վիրավորներ ու սպանվածներ:

Ղուկասյանը՝ ատելի թշնամուն դիմադրելու այդ կռիվում, մի անգամ ևս հանդես է բերում իր հողափոխական մարտիկին վաչկի բոլոր դժերը:

Սակայն նա վիրավորվում է փորից ու, չնայած դրան, նորից շարունակում դիմադրել դաշնակ բանդային մինչև վաչ ժամանակ, լերը դաշնակ մառզերիստների մահացու գնդակներն անշնչացնում են հերոս մարտիկին:

Ղուկասյանի հետ միասին ընկնում են նաև ութ հոգի. մնացածների մի մասը գերի չե բռնվում, իսկ մյուս մասին հաջողվում է փախչել:

Ղուկասյանի և ընկերների դիակը հողին են հանձնում շրջակա գյուղերի գյուղացիները:

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՅԵՆՈՔ

Ծնվել է 1896 թ. Իջևանի շրջանի Բրդեվան գյուղում, հողագործի ընտանիքում: Սկզբնական կրթություն ստացել է գյուղում (Իջևանում և վ. Աղդաճում): Ապա մտնում է Եջմիածնի ճեմարանը, վորն ավարտելուց հետո, իմպերիալիստական պատերազմի ժամանակ, 1915 թվին կանչվում է զինվորական ծառայության, վորտեղ մնում է մինչև 1917 թ.:

1917 թվին վերադառնում է գյուղ և աշխատում է վորպես ուսուցիչ՝ մինչև 1920 թ., մալխյան ապստամբությունը: Իր ուսուցչական աշխատանքի ընթացքում, Յենոքն ամբողջ շրջան է տանում և կոմունիստական լեռան դուն, տենդագին աշխատանք, վորպես Հայկոմկուսի այդ շրջանի աշխատանքները ղեկավարող ընկերներից մեկը:

Նրա անմիջական ձեռներեցությունը է, վոր շրջանի մի շարք գյուղերում կազմակերպվում են կոմունիստական ընդհատակյա բջիջներ: Դեռ ևս այդ ժամանակ Յենոքը հայտնի չէ դառնում դաշնակցությանը, նրան միջանի անգամ փորձում են բանտարկել, բայց չի հաջողվում:

Մալխյան ապստամբության ժամանակ Իջևանի և Դիլիջանի շրջաններում նա դառնում է ապստամբության գլխավորներից մեկը:

Ապստամբությունը ճնշվելուց հետո, Մ. րատմյանը, դաշնակ խմբապետների հետ ունեցած ընդհարման ժամանակ՝ վիրավորված լինելով և խուլս տալ չկարողանալով՝ ընկնում է նրանց ճանկը. և նրան ամենավաղրագ, ամենադաժան կերպով չարչարելուց հետո՝ գնդակահարում են:

ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

Ծնվել է նախկին Գանձակի դավառի Չայքենդ գյուղում, չքավոր գյուղացու բնտանիքում: Հայրը հարեան Կարադաղլի գյուղում աշխատում եր վորպիս ջրաղացպան: Սկզբնական կրթությունն ստացել է գյուղում, ապա Գորիսում և Թիֆլիսում: Վորոշ ժամանակ զբաղվում է ուսուցչութամբ և ապա կանչվում է բանակ՝ բանակում ձեռք է բերում սպայի աստիճան և լինելով «Միրիրյան № 29 հրաձիգ գնդում», ուղարկվում է արևմտյան Ֆրոնտ՝ հատկապես Մինսկ, վորտեղ նա յերկար ժամանակ մասնակցում է կռիվներին: Վ. պես սպա, Մուսայելյանը ցարական բանակում ունեցել է լիբերալ հակակառավարական տրամադրություններ: Ցարական կառավարության անկումից և դաշնակցական պետականության կազմավորումից հետո գալիս է Հայաստան և աշխատում է դաշնակցության բանակում, վարելով դաշնակցության «Վարդան Զորավար» զբահապատի հրամանատարի պաշտոնը: Մի քանի տարի շարունակ աշխատելով դաշնակցական բանակում և իր աչքով տեսնելով դաշնակցական կառավարության խոկական դեմքն ու հյուսթյունը, տեսնելով ազգամիջյան կռիվները և այլն, վորպիս աշխատավորական մասսայի միջից դուրս յեկած տարրի, նրա մեջ առաջ է գալիս հիմնական բեկում և նա իրեն նետում է բանվոր դասակարգի մարտական կուսակցության՝ բոլշևիկների շարքը, նվիրելով իրեն պրոլետարական հեղափոխության մեծ գործին:

Ապստամբության նախորդներն և որերին, Մուսայելյանի զբահապատը դառնում է ապստամբների կենտրոնը: Վորպես անվախ, համարձակ հեղափոխական, խիզախ ու յեռանդուն գործիչ, նա դառնում է ապստամբության գլխավորներից ու ղեկավարներից մեկը: Ռազմհեղափոխական կոմիտեյի կողմից նշանակվում է ռազմական գործերի կոմիտար և ընդհանուր գորահրամանատար և իր այդ պաշտոնում մնում է մինչև վերջ: Ապստամբության ճնշումից հետո Մուսայելյանը բանտարկվում է և գցվում Ալեքսանդրապոլի բանտը, այնտեղից տեղափոխվում է Յերևանի բանտը և ոգոստոսի 14 ին (գիշերը), Ղարիբջանյանի և Ալլահվերդյանի հետ միասին, Յերևանից Քանաքեռ տանող ճանապարհի վրա գնդակահարվում է և դիակն աչբում:

ԱԼԵՔՍԵՅԵՎ ՎԱՍԻԼԻ ՎԱՍԻԼԻՅԵՎԻԶ

Ծնվել է 1896 թ. Դիլիճանում, աղքատ գյուղացու ընտանիքում: Ծնողները պարապում էին հողագործությամբ: 1905 թվին մտնում է դուղական, յեկեղեցական ծխական դպրոց և 1910 թվին ավարտելով, անցնում է Յերևան ու սովորում Ուսուցչական Սեմինարիայում, վորն ավարտում է 1916 թ.: Սեմինարիան ավարտելուց հետո Ալեքսեյեվը կանչվում է գինավորական ծառայության, վորտեղ նա անցնում է պրապորշչիկների դպրոցը և ապա ուղարկվում է թուրքական Ֆրոնտը:

1918 թվին Ֆրոնտից վերադառնում է Դիլիճան և հրաժարվում է ծառայել դաշնակցական կուսակցության բանակում:

1918 թվից մինչև 1920 թիվը Ալեքսեյեվը, վորպես գյուղական ուսուցիչ, աշխատում է Նադեժդինո և Սուխույ-Ֆանտան գյուղերում:

1920 թվի ապրիլ-մայիս ամիսներն դնում է Դիլիճան և տեղի կոմկուս. կազմակերպության հետ միասին աշխատում Դիլիճանում, նախապատրաստելով մայիսյան ապստամբությունը:

Ապստամբության ժամանակ լինելով Ռադիկեղիումի անդամ և շտաբի նախագահ՝ նա անմիջական ակտիվ մասնակցություն է ցույց տալիս ապստամբությանը, վորի պարտությունից հետո ցանկանում է խույս տալ դաշնակցական տերրորից, սակայն, դեպի Վաթանցովկա տանող ճանապարհին բռնվում է և ուղարկվում Ղարաքիլիսայի բանոր, վորտեղից և Վաղինակ Հովհաննիսյանի հետ տարվում է Դիլիճանի բանտը:

Հունիսի 5-ին (1920 թ.) Ալեքսեյեվը և Վաղինակ Հովհաննիսյանը Դիլիճանի բանտից տարվում են իբր թե հարցաքննության, և «հարցաքննությունից» հետո՝ բանտ վերադառնալու ժամանակ, բանտի մոտ դանվող կամուրջի վրա գնդակահարվում են այն պրովոկացիոն պատճառաբանությամբ, վոր իբր թե նրանք (Ալեքսեյեվը և Հովհաննիսյանը) ցանկանում էին փախչել:

Ընկ. Ալեքսեյեվը չերկար ժամանակ աշխատել է Հայաստանի կոմկուսակցության անլեզալ կազմակերպությունների մեջ:

ՂԱՐԻՔՁԱՆՅԱՆ ԲԱԳՐԱՏ

Ծնվել է 1890 թ. նախկին Սուրմալուլի գավառի Բահաուլու գյուղում: Սկզբնական կրթությունն ստացել է գյուղում, ապա Իգդիրի քաղաքային դպրոցում, վորը վերջացնելուց հետո՝ 1908 թ. նշանակվում է Տավշանդշլաղ գյուղի դպրոցի ուսուցիչ: Նույն այդ պաշտոնով նա աշխատում է մի շարք այլ գյուղերում և այդպես մինչև 1915 թ. 1915 թ. սեպտեմբերին ուսուցչական պաշտոնից հեռացվում է վորպես «անհուսալի», հեղափոխական, «հակահառավարական» տարր:

Փետրվարյան հեղափոխությունից (1917) հետո Ղարիքձանյանն անցնում է ակտիվ հեղափոխական գործնելության:

Աշխատում է վորպես բոլշևիկ՝ Ալեքսանդրապոլում: Ընտրվում է քաղաքային դումայի ձայնավոր: Այնտեղ նա կուսակցական մեծ աշխատանքներ է տանում մինչև իր կյանքի վերջին օրերը: Առանձնապես վճռական կռիվ էր մղում դաշնակցության դեմ:

Ղարիքձանյանն աչքի չեք ընկնում իր տեսական, մարքսիստական պատրաստականությամբ. նա ունի մի շարք ձևազիր և տպագիր մարքսիստական լուրջ աշխատություններ:

Մայիսյան ապստամբություններին չեռանդուն և ակտիվ մասնակցություն է ցույց տալիս: Ապստամբության ճնշումից հետո ձերբակալվում է ու ձգվում բանտ:

1920 թ. Ալեքսանդրապոլի դաշնակցական արտակարգ դատարանի կողմից նրան մահվան են դատապարտում, հետո, ներում շնորհելու պատճառաբանությամբ, տեղափոխում են Յերևանի բանտ: Բայց ոգոստոսի 14-ի գիշերը նրան Ալլահվերդյանի և Մուսայելյանի հետ միասին տանում են Քահաքեռի տակ գնդակահարում, իսկ դիակն այրում:

ՍԵՎՈՅԱՆ ՅԵԳՈՐ

Ծնվել է 1885 թ. Զանգեզուրի Քարահունջ գյուղում, հյուսնի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել է գյուղի ծխական դպրոցում: Դեռևս յերիտասարդ հասակում թողնում է գյուղը և գնում Բագու, վորտեղ սկզբում աշխատում է գործվածքային և ապա՝ նավթային արդյունաբերության մեջ, ուր և ալտիվ կերպով մասնակցում է Բագվի բանվորության հեղափոխական շարժումներին ու գործադուլներին:

1918 թվին մտնում է կոմ. կուսակցության շարքերը և դառնում Բագվի հերոսական կոմունայի մարտիկներից մեկը, պայքարելով կոմունայի համար մինչև վերջը: Կոմունայի անկումից հետո անլեզալ աշխատում է մուսաֆաթական Ադրբեջանում, կրելով ամեն տեսակ նեղություններ ու հալածանքներ: Մուսաֆաթիստների հետապնդումներից ազատվելու համար, 1919 թ. գալիս է Ալեքսանդրապոլ և աշխատում դեպոյում վորպես տուկար: Այստեղ Սեվյանին հաջողվում է մյուս ընկերների հետ միասին ընդհատակյա բոլշևիկյան բջիջը դնել ամուր հիմքերի վրա և հաջող աշխատանքներ տանել բանվորության մեջ: Շուտով Սեվյանը, վորպես բոլշևիկ, հայտնաբերվում է դաշնակների կողմից և 1920 թ. հունվար ամսին մի քանի ուրիշ ընկերների հետ բանտարկվում է: Սակայն, դեպոյի բանվորության միահամուռ բողոքի շնորհիվ, դաշնակցական կառավարությունն ստիպված է լինում նրան ազատ արձակել, վորը և հնարավորություն է տալիս Սեվյանին նորից անցնել կուսակցական աշխատանքի:

Մայիսյան ցույցերին և ապստամբությունը ամենաակտիվ մասնակցություն է ունենում, ընկերների հետ կազմակերպում է կարմիր դվարդիա ու ղեկավարում այն:

Ապստամբության պարտությունից հետո, Մայիսի 14-ին, ձերբակալվում է ձգվում է բանտ, իսկ հունիսի 4-ին Փանջանի և Պրիբիլսկու հետ միասին զնդակահարվում է դաշնակցական կառավարության կողմից:

ԲԱԴԻԿՅԱՆ ԲԱԴԻԿ

Ծնվել է 1892 թ. Նոր-Բայազեդում: Սկզբնական կրթութունն ստացել է Նոր-Բայազեդի քաղաքային դպրոցում և, հնարավորութուն չունենալով այլևս ուսումը շարունակել, սկսում է անմիջապես զբաղվել ուսուցչությամբ: Դեռևս 1905 թվին մտնում է Ռ. Ս. Դ. Բ. Կ. մեջ և հենց այդ ժամանակից էլ ընկեր Հովհաննես Սարուխանյանի հետ միասին սկսում է ակտիվ կուսակցական աշխատանքներ տանել Նոր-Բայազեդում:

1914 թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ լինելով և զորակոչի և ուղարկվում զինվորական ծառայության՝ ժիտոմիր քաղաքը, վորտեղից և ուղարկվում է Ֆրոնտ՝ Կարպատները, մնալով ռազմաճակատում ամբողջ 3 տարի:

1917 թ. վերադառնալով Նոր-Բայազեդ, Բադիկյանն իսկույն անցնում է աշխատանքի. ընկերներին հետ մշասին կազմակերպում է կոմ. կուս. բջիջ և սկսում է ակտիվ պայքար մղել ինչպես դաշնակցության, նույնպես և մենշևիկներին ու սպեցիֆիկներին դեմ:

Սակայն 1918 թ. դաշնակցութունը նրան կարողանում է բռնի ֆրոնտ ուղարկել, վորտեղ Բադիկյանը տենդորեն բոլշևիկյան աշխատանք է տանում:

1918 թ. հիվանդության պատճառով վերադառնում է Նոր-Բայազեդ, իսկ 1920 թ. սկզբին նորից ստանձնում է ուսուցչական պաշտոն և վերսկսում նորից իր կուսակցական աշխատանքները: Հենց այդ ժամանակ Բադիկյանը և Սարուխանյանն ընտրվում են Հայաստանի կոմկուսակցության 1-ին կոնֆերանսի պատգամավորներ՝ Նոր-Բայազեդի կուսկազմակերպության կողմից:

Մայիսյան ապստամբության ժամանակ ղեկավար և ակտիվ աշխատանքներ է տանում: Ապստամբության ճնշվելուց հետո, հիվանդ լինելու պատճառով, նա իր ամբողջ ընտանիքով բանտարկվում է. սակայն, չնայած նրատեվական հիվանդության, դաշնակցական խմբապետ Համազասպը՝ նրան անասելի տանջանքներին չե յենթարկում և 1920 թ. սեպտեմբերին Յելենովկայից չերկու վերստ հեռավորության վրա, գազանաբար գնդակահարում են:

ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ

Ծնվել է Աշտարակի շրջանի Կարբի գյուղում, նահապետական ընտանիքում. 1895 թվին մտնում է աշտարակի չերկդասյան տարրական դպրոցը և 1900 թ. տեղափոխվում է Յերևանի ուսուցչական սեմինարիան: 1905 թ. ավարտելով վերջինս՝ անմիջապես նշանակվում է Դարալագյազի Աջնադուր գյուղում ուսուցիչ: 1908 թ. նրան յաջողվում է անցնել արտասահման՝ Շվեյցարիա, վորտեղ մեծ դժվարություններից հետո կարողանում է ընդունվել Ժնևի համալսարանը. սովորում է այնտեղ մինչև 1911 թվը: Դաշնակցական կուսակցության մեջ չեղել է մինչև իր կյանքի վերջին տարիները:

Սակայն դաշնակցական կուսակցության պետականության շրջանը (1918-1920 թ. թ.) չէր կարող հիմնական բեկում առաջ չբերել Մելքոնյանի՝ աշխատավորության ծոցից դուրս չեկած այդ ընկերոջ մեջ: Դաշնակցության վողջ հակահեղափոխական ուսուցիչն դեմքը, եյուլթյունն ամենից ալիքի ցայտուն արտահայտվեց ահա հենց այս շրջանում, յիբբ իր ամբողջ ցայտունությունը, առանց ծածկելու կիրառվում էր բուրժուա-կուլակային, կալվածատիրական վողջ սոցիալ-տնտեսական դասակարգային քաղաքականությունը, չիրք տեղի ելին ունենում հայ բուրժուաների գրպանների համար մղվող ազգամիջյան կտորածները, ջարդերը և մյուս կողմից ուժեղանում էր բանվորական, աշխատավորական մասսաների անասելի շահագործումը:

Յեվ ահա այսպիսի պայմաններում բնական էր տեսնել, թե ինչպես Մելքոնյանը կտրում է իր բոլոր կապերը դաշնակցությունից և մտնում հեղափոխական պրոլետարիատի կուսակցության մեջ:

1920 թ. վերջի ամիսներին Մելքոնյանն անվախ ու համարձակ կռիվ է սկսում դաշնակցական կուսակցության ու նրա իշխանության դեմ, մերկացնելով նրա դասակարգային դեմքը: 1920 թ. սկզբներին Աշտարակի շրջանում նա հիմք է դնում «Գյուղացիական Միությունը». նրա ջանքերով Հայաստանում կազմակերպվում են «Գյուղացիական Միություններ», ապա չերևանում հրատարակվում է «Գյուղացիության Ձայն» թերթը՝ իր խմբագրությունը: Լիատելությունը ու թշնամությունը դեպի դաշնակցությունը՝ Մայիսյան հերոսական որերին՝ Հայաստանի բանվորության և աշխատավորական լայն զանգվածների առաջին մասսայական ապստամբության ժամանակ՝ նա իրեն նետում է դասակարգային այդ հերոսական պայքարի մեջ, գրավելով ապստամբություն և նրա նախապատրաստման մեջ ղեկավարող դերերից մեկը: Ապրիլ-

տամբութչան ժամանակ նա ընտրվում է Ռազմհեղկոմի կազմի մեջ ու Արմենկոմի կողմից ուղարկվում է Ալեքսանդրապոլ՝ ապստամբութչունը ղեկավարելու համար:

Դաշնակցութչունը որինքից դուրս և «ազգի դավաճան» է հայտարարում նրան: Նրան ձերբակալելու համար գլխագին և նշանակում:

Ապստամբութչան պարտութչունից հետո դաշնակցական դաժան տերրորից խուսափելու համար՝ Մելքոնյանն Ալեքսանդրապոլից հեռանում է իրենց գյուղը, այնտեղ թափնվելու նպատակով: Սակայն իրենց հարևան Ռհանավանք գյուղում, տեղի կուլակային խմբակների կողմից բռնվում է և անասելի ծեծի ու բռնութչունների չենթարկվում, վորից հետո տեղափոխվում է Աշտարակի բանտը, վորտեղ նույնպես ծեծի ու ծաղրանքի չենթարկվելով՝ ուղարկվում է Եջմիածնի բանտը:

Այստեղից ել, միլիցապետ Համադասայանի կարգադրութչամբ բանտից դուրս են բերում իբր թե Յերևան տեղափոխելու համար, սակայն ճանապարհին, նախորոք կազմակերպված դաշնակցական խմբապետները, պարլամենտի չերկու անդամների ներկայութչամբ, գնդակահարում են և միայն ղիակը հասցնում Յերևան:

ՓԱՆՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՍ

Ծնվել է 1892 թ. Շամախուում: Սովորել է Մոսկվայի Լազարյան Ճեմարանում, հետագայում՝ Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Մասնակցել է իմպերիալիստական պատերազմին վորպես բժիշկ: Յեղել է Լըվովի, Կարպատների ֆրոնտում: Վիրավորվել է գլխից: Հոկտեմբերյան հեղափոխութլունից հետո նա գործում է Մոսկվայում: Այդ ժամանակ իր հայացքներով նա մոտենում էր անարխիստ-կոմունիստներին:

Հեղափոխութլան շարժումներին նա մասնակցել է դեռ դպրոցական հասակից՝ Մոսկվայում, Մոսկվայի համալսարանի ուսանողական շարժումներին, վորի համար նրան դուրս են անում բժշկական ֆակուլտետից: Կոմունիստական կո. սակցութլան մեջ է սկսած 1918 թվից:

Ցանկանալով ծնողներին տեսնել, նա անցնում է Թուրքեստան և ձերբակալութլունից խուսափելու համար մտնում է Ասխաբատի հիվանդանոցը՝ բժիշկի պաշտոնով, վորտեղ և կազմակերպում է կոմունիստական բջիջ: Այս պատճառով նրան ձերբակալում են, սակայն հաջողվում է փախչել և մեծ չարչարանքներից հետո անցնում է Թիֆլիս:

Այդ ժամանակ Հայաստանում զարգանում էլին հեղափոխական շարժումները: Փանյանը շուտով Յերկրային Գոմիտեից առաջարկ է ստանում մեկնել Հայաստան՝ ընդհատակյա աշխատանքի:

Հեղափոխական շարժումների բուռն վերելքի ժամանակ՝ Փանյանն աշխատում է Ալեքսանդրապոլի շրջանում, իսկ Մայիսյան ապստամբութլունների ժամանակ՝ Բավթարլի գյուղում:


Շուտով դառնում է այդ շրջանի ամենակալիվ գործիչը:


Ապստամբութլան ժամանակ շրջանում ղեկավար դեր է խաղում, վորպես ռազմ. հեղափոխական կոմիտեի անդամ և նախաչահ:

Ապստամբութլան պարտութլունից հետո ձերբակալվում և բանտարկվում է Ալեքսանդրապոլի բանտում: Այդտեղ նա հիվանդանում է տիֆով: Ինչպես բոլոր «հանցավորներին», այնպես էլ Փանյանին հանձնում են արտակարգ դատարանին:

Ինչպես ցույց են տալիս գործերը և ականատեսների պատմածները, Փանյանն իրեն պահում է վորպես կայուն և համոզված բոլշևիկ: Արտակարգ դատարանը, ինչպես և նրա դատախազ բժիշկ Բաղդասարյանը, նրան մեղադրում են «հայրենիքի դավաճանութլան» մեջ:

1920 թ. հունիսի 4-ին 40 աստիճանի տաքութլան մեջ, Փանյանին, Յեգոր Սեվոյանի ու Պրիբիլսկու հետ միասին, դաշնակ դահիճները բժ. Բաղդասարյանի անձնական ղեկավարութլամբ, բանտից դուրս են բերում և քաղաքից դուրս հրեական գերեզմանատան մոտ գնդակահարում են:





(1294)

ՀԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



FL0067931

ЦЕНА

~~2635~~
2635